«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մարտի 2016 թվականի

«Ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) խորհրդի հաշվետվությունը կատարված աշխատանքների մասին» հարցի մասին

Լսելով և քննարկելով **«Ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) խորհրդի հաշվետվությունը կատարված աշխատանքների մասին»** հարցը (զեկուցող՝ ուսանողական գիտական ընկերության խորհրդի նախագահ Հ.Ա.Արզումանյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. անցած մեկ տարվա ընթացքում ուսանողական գիտական ընկերությունը մասամբ կատարել է իր գործառույթները:

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են ՈՒԳԸ 37-րդ նստաշրջանի նախապատրաստական աշխատանքներ, ֆակուլտետներում և ամբիոններում նշանակվել են ՈՒԳԸ գիտական ղեկավարներ և պատասխանատուներ, աշխատանքներ են տարվել ուսանողների շրջանում, ինչպես նաև ապահովվել է համագործակցություն այլ բուհերի հետ:

Գիտական խորհուրդը, միաժամանակ, նշում է՝ ՈՒԳԸ նպատակների լիարժեք իրագործման համար կատարվող աշխատանքները դեռևս բարելավման կարիք ունեն:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը **որոշում է.**

1. **ՈՒԳԸ աշխատանքները գնահատել բավարար:**

2. **Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝**
   1) ամբիոնների նիստերում հաստատել ՈՒԳԸ տարեկան աշխատանքների թեմաները.
   2) նշանակել ամբիոնային ՈՒԳԸ պատասխանատուներ և գիտական ղեկավարներ ամբիոնների փորձառու դասախոսներից:

3. **Հանձնարարել դեկաններին՝**
   1) քննարկել և մշտապես վերահսկել ՈՒԳԸ աշխատանքները ֆակուլտետներում և ամբիոններում.
   2) ասպիրանտուրայի ընդունելության գործընթացում կարևորել մասնակցությունը ՈՒԳԸ աշխատանքներին:

4. **Հանձնարարել ՈՒԳԸ խորհրդին՝**
   1) մշակել և ներկայացնել ուսանողներին ՈՒԳԸ աշխատանքներով զբաղվելու խթանման ծրագրեր.
   2) ներկայացնել ՈՒԳԸ կանոնադրության փոփոխությունների նախագիծ.
   3) հաստատել գիտական կապեր ՀՊՏՀ-ի հետ համագործակցող բուհերի ՈՒԳԸ-ների հետ:

5. **Որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ուսանողների և շրջանավարտների հետ աշխատանքների գծով պրոռեկտոր Ս.Ս.Խաչատրյանին:**

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**
11.03.2016 թ.